

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Մաքսային միության հանձնաժողովի

2011 թվականի օգոստոսի 16-ի

թիվ 769 որոշմամբ



**ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

---

**ՄՄ ՏԿ 005/2011**

**Փաթեթվածքի անվտանգության մասին**

## Բովանդակություն

|   |    |
|---|----|
| <b>Նախաբան</b> .....  | 3  |
| <b>Հոդված 1.</b> Կիրառության ոլորտը .....   | 3  |
| <b>Հոդված 2.</b> Սահմանումները.....   | 5  |
| <b>Հոդված 3.</b> Շուկայում շրջանառության կանոնները .....  | 7  |
| <b>Հոդված 4.</b> Անվտանգությանը ներկայացվող պահանջներին համապատասխանության ապահովումը.....  | 8  |
| <b>Հոդված 5.</b> Անվտանգությանը ներկայացվող պահանջները.....   | 9  |
| <b>Հոդված 6.</b> Փաթեթվածքի (խցանափակման միջոցների) մականշվածքին ներկայացվող պահանջները.....  | 16 |
| <b>Հոդված 7.</b> Համապատասխանության հավաստումը .....  | 18 |
| <b>Հոդված 8.</b> Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով մակնշումը .....   | 22 |
| <b>Հոդված 9.</b> Երաշխիքային վերապահումը .....  | 22 |
| <b>Հավելված 1</b> Սննդամթերքի հետ շփվող փաթեթվածքից (խցանափակման միջոցների) նյութերից արտազատվող նյութերի անվտանգության սանիտարահիգիենիկ ցուցանիշները եւ նորմատիվները ..... | 23 |
| <b>Հավելված 2</b> Փաթեթվածքի (խցանափակման միջոցների) հետազոտության ժամանակ օգտագործվող մոդելային միջավայրերի ցանկ.....  | 44 |
| <b>Հավելված 3</b> Նյութի թվային, տառային (հապավում) նշագրումը, որից պատրաստվում է փաթեթվածքը (խցանափակման միջոցները) .....  | 48 |
| <b>Հավելված 4</b> Փաթեթվածքի (խցանափակման միջոցների) մականշվածքի վրա զետեղվող պիկտոգրամներ եւ պայմանանշաններ.....   | 51 |

# ՓԱԹԵԹՎԱԾՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՄՄ ՏԿ 005/2011

## **Նախաբան**

1. Սույն Տեխնիկական կանոնակարգը մշակված է «Բելառուսի Հանրապետությունում, Ղազախստանի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում տեխնիկական կանոնակարգման միասնական սկզբունքների ու կանոնների մասին» 2010 թվականի նոյեմբերի 18-ի համաձայնագրին համապատասխան:

2. Սույն Տեխնիկական կանոնակարգը մշակված է Մաքսային միության մաքսային տարածքում փաթեթվածքին (խցանափակման միջոցներին) ներկայացվող կիրառության եւ կատարման համար պարտադիր միասնական պահանջներ սահմանելու, Մաքսային միության մաքսային տարածքում շրջանառության մեջ դրվող փաթեթվածքի (խցանափակման միջոցների) ազատ տեղափոխումն ապահովելու նպատակով:

3. Եթե փաթեթվածքի (խցանափակման միջոցների) վերաբերյալ ընդունված են փաթեթվածքին (խցանափակման միջոցներին) ներկայացվող պահանջները սահմանող Մաքսային միության տեխնիկական այլ կանոնակարգեր, ապա փաթեթվածքը (խցանափակման միջոցները) պետք է համապատասխանի Մաքսային միության տեխնիկական բոլոր այն կանոնակարգերի պահանջներին, որոնց գործողությունը տարածվում է դրա վրա:

## **Հոդված 1. Կիրառության ոլորտը**

1. Սույն Տեխնիկական կանոնակարգը տարածվում է պատրաստի արտադրանք հանդիսացող փաթեթվածքի բոլոր տեսակների վրա՝ ներառյալ

խցանափակման միջոցները, որոնք դրվում են շրջանառության մեջ Մաքսային միության մաքսային տարածքում՝ անկախ ծագման երկրից:

2. Փաթեթվածքի (խցանափակման միջոցների) բոլոր տեսակների վրա, որոնք պատրաստվում են այն արտադրանքն արտադրողի կողմից, որը փաթեթավորվում է դրա արտադրության գործընթացում, դրվում է շրջանառության մեջ Մաքսային միության մաքսային տարածքում, տարածվում են սույն Տեխնիկական կանոնակարգի միայն 2-րդ, 4-րդ, 5-րդ հոդվածների, 6-րդ հոդվածի 1-ին, 2-րդ կետերի, 9-րդ հոդվածի պահանջները:

3. Սույն Տեխնիկական կանոնակարգով սահմանվում են Մաքսային միության մաքսային տարածքում փաթեթվածքին (խցանափակման միջոցներին) ներկայացվող կիրառության եւ կատարման համար պարտադիր պահանջները եւ դրանց հետ կապված պահպանման, փոխադրման եւ ուտիլիզացիայի գործընթացների նկատմամբ պահանջները՝ մարդու կյանքն ու առողջությունը, գույքը, շրջակա միջավայրը, կենդանիների, բույսերի կյանքը կամ առողջությունը պաշտպանելու, ինչպես նաեւ՝ փաթեթվածքի (խցանափակման միջոցների) սպառողներին դրա նշանակության եւ անվտանգության առնչությամբ մոլորության մեջ գցող գործողությունները կանխելու նպատակով:

4. Փաթեթվածքը, ըստ օգտագործվող նյութերի, բաժանվում է հետեւյալ տեսակների.

- մետաղական,
- պոլիմերային,
- թղթե եւ ստվարաթղթե,
- ապակյա,
- փայտյա,
- համակցված նյութերից,
- տեքստիլ նյութերից,

կերամիկական:

5. Խցանափակման միջոցները, ըստ օգտագործվող նյութերի, բաժանվում են հետևյալ տեսակների.

մետաղական, կեղևախցանային, պոլիմերային, համակցված եւ ստվարաթղթից:

6. Սույն Տեխնիկական կանոնակարգը չի տարածվում բժշկական սարքերի, դեղամիջոցների, դեղագործական արտադրանքի, ծխախոտային արտադրատեսակների եւ վտանգավոր բեռների համար նախատեսված փաթեթվածքի վրա:

## **Հոդված 2. Սահմանումները**

Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգում կիրառվում են հետևյալ տերմինները եւ դրանց սահմանումները.

նույնականացում՝ փաթեթվածքը (խցանափակման միջոցները) սույն Տեխնիկական կանոնակարգի կիրառության ոլորտին դասելու եւ փաթեթվածքի (խցանափակման միջոցների) փաստացի բնութագրերի՝ տեխնիկական փաստաթղթերում (այդ թվում՝ ուղեկցող փաստաթղթերում) պարունակվող տվյալներին համապատասխանությունը սահմանելու ընթացակարգը,

պատրաստող (արտադրող)՝ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձ, որն իր անունից իրականացնում է փաթեթվածքի (խցանափակման միջոցների) արտադրությունը եւ (կամ) շրջանառության մեջ դնելը եւ պատասխանատու է սույն Տեխնիկական կանոնակարգի անվտանգության պահանջներին համապատասխանության համար,

ներմուծող՝ Մաքսային միության անդամ պետության ռեզիդենտ, որը Մաքսային միության անդամ պետության ոչ ռեզիդենտի հետ կնքել է

փաթեթվածքի (խցանափակման միջոցների) փոխանցման արտաքին առևտրային պայմանագիր, իրականացնում է փաթեթվածքի (խցանափակման միջոցների) իրացումը եւ (կամ) օգտագործումն ու պատասխանատվություն է կրում Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի անվտանգության պահանջներին դրա համապատասխանության համար,

փաթեթվածքի (խցանափակման միջոցների) մականշվածք՝ փաթեթվածքի (խցանափակման միջոցների) վրա նշանների, գրառումների, պիկտոգրամների, պայմանանշանների տեսքով զետեղվող տեղեկություններ եւ (կամ) ուղեկցող փաստաթղթեր՝ նույնականացումն ապահովելու, սպառողներին իրազեկելու համար,

բազմաշրջանառու փաթեթվածք՝ բազմակի կիրառության համար նախատեսված փաթեթվածք,

մոդելային միջավայր՝ սննդամթերքի հատկությունները նմանակող միջավայր,

շուկայում շրջանառություն՝ փաթեթվածքը (խցանափակման միջոցները) արտադրողից սպառողին (օգտագործողին) փոխանցվելու գործընթացներ, որոնցով անցնում է փաթեթվածքը (խցանափակման միջոցները)՝ պատրաստման ավարտից հետո,

սպառողական փաթեթվածք՝ վերջնական սպառողին իրացվող արտադրանքի վաճառքի կամ սկզբնական փաթեթավորման համար նախատեսված փաթեթվածք,

ըստ նշանակության կիրառություն՝ փաթեթվածքի (խցանափակման միջոցների) օգտագործումը՝ արտադրողի կողմից սահմանված նշանակությանը համապատասխան,

փաթեթվածքի (խցանափակման միջոցների) տեսակ՝ փաթեթվածքը (խցանափակման միջոցները) ըստ նյութի եւ կառուցվածքի սահմանող դասակարգման միավոր,

տիպային նմուշ՝ փաթեթվածքի (խցանափակման միջոցի) նմուշը՝ մի խումբ համանման արտադրանքից ընտրված, միեւնոյն նյութերից միեւնոյն տեխնոլոգիայով պատրաստված, միեւնոյն կառուցվածքն ունեցող եւ անվտանգության միեւնոյն պահանջներին համապատասխանող,

տրանսպորտային փաթեթվածք՝ արտադրանքի պահպանման եւ փոխադրման համար նախատեսված փաթեթվածք, որը նախատեսված է արտադրանքը տեղափոխելիս վնասվածքներից պաշտպանելու համար, եւ որն առանձին տրանսպորտային միավոր է կազմում,

խցանափակման միջոց՝ փաթեթվածքը խցանափակելու եւ դրա պարունակությունը պահպանելու համար նախատեսված արտադրատեսակ,

փաթեթվածք՝ արտադրատեսակ, որն օգտագործվում է հումքը եւ պատրաստի արտադրանքը տեղավորելու, պաշտպանելու, փոխադրելու, բեռնելու եւ բեռնաթափելու, առաքելու եւ պահպանելու համար,

փաթեթավորման նյութ՝ փաթեթվածքի պատրաստման համար նախատեսված նյութ:

### **Հոդված 3. Շուկայում շրջանառության կանոնները**

1. Փաթեթվածքը (խցանափակման միջոցները) դրվում է շրջանառության մեջ Մաքսային միության մաքսային տարածքում այն պայմանով, որ այն անցել է սույն Տեխնիկական կանոնակարգով, ինչպես նաեւ՝ Մաքսային միության մյուս այն տեխնիկական կանոնակարգերով սահմանված համապատասխանության գնահատման (հավաստման) համար անհրաժեշտ ընթացակարգերը, որոնց գործողությունը տարածվում է փաթեթվածքի (խցանափակման միջոցների) վրա:

2. Փաթեթվածքը (խցանափակման միջոցները), որի համապատասխանությունը սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին հաստատված չէ, չպետք է մակնշվի Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով, եւ չի թույլատրվում Մաքսային միության մաքսային տարածքում այն բաց թողնել շրջանառության մեջ:

#### **Հոդված 4. Անվտանգությանը ներկայացվող պահանջներին համապատասխանության ապահովումը**

1. Փաթեթվածքի (խցանափակման միջոցների) համապատասխանությունը սույն Տեխնիկական կանոնակարգին ապահովվում է կամ վերջինիս պահանջներն ուղղակիորեն կատարելու կամ այն ստանդարտների պահանջները կատարելու միջոցով, որոնց կամավոր հիմունքով կիրառման արդյունքում ապահովվում է սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանումը, եւ այն ստանդարտների պահանջները կատարելու միջոցով, որոնք պարունակում են սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջները կիրառելու եւ կատարելու եւ արտադրանքի համապատասխանության գնահատում (հավաստում) իրականացնելու համար անհրաժեշտ՝ հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների կանոններ ու մեթոդներ, այդ թվում՝ նմուշառման կանոններ (այսուհետ՝ ստանդարտներ):

Տվյալ ստանդարտների պահանջները կամավոր հիմունքով կատարելը վկայում է փաթեթվածքի (խցանափակման միջոցների)՝ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության մասին:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված ստանդարտների ցանկը հաստատում է Մաքսային միության հանձնաժողովը:



## **Հոդված 5. Անվտանգության պահանջները**

1. Փաթեթվածքը (խցանափակման միջոցները) եւ դրա պահպանման, փոխադրման եւ ուտիլիզացիայի գործընթացները պետք է համապատասխանեն սույն հոդվածի անվտանգության պահանջներին:

2. Փաթեթվածքը (խցանափակման միջոցները) պետք է նախագծվի եւ պատրաստվի այնպես, որ այն ըստ նշանակության կիրառելիս ապահովվի փաթեթվածքի (խցանափակման միջոցների) կառուցվածքով եւ օգտագործվող նյութերով պայմանավորված ռիսկի նվազեցումը:

3. Փաթեթվածքի անվտանգությունը պետք է ապահովվի ստորեւ նշվածներին ներկայացվող պահանջների ամբողջությամբ.

կիրառվող նյութեր, որոնք շփվում են սննդամթերքի հետ՝ սանիտարահիգիենիկ ցուցանիշների առումով,

մեխանիկական ցուցանիշներ,

քիմիական կայունություն,

հերմետիկություն:

4. Սննդամթերքի, այդ թվում՝ մանկական սննդի հետ շփվող փաթեթվածքը պետք է համապատասխանի 1-ին հավելվածում նշված սանիտարահիգիենիկ ցուցանիշներին:

Փաթեթվածքի սանիտարաքիմիական հետազոտությունների մոդելավորման պայմանները նշված են 2-րդ հավելվածում:

5. Սննդամթերքի, այդ թվում՝ մանկական սննդի, պարֆյուներային, կոսմետիկական արտադրանքի, խաղալիքների, մանկական տեսականու արտադրատեսակների փաթեթավորման համար նախատեսված փաթեթվածքը դրանց հետ շփվող մոդելային եւ օդային միջավայրերի մեջ չպետք է արտազատի նյութեր՝ մարդու առողջության համար վնասակար՝ քիմիական նյութերի

միգրացիայի առավելագույն թույլատրելի քանակությունը գերազանցող քանակությամբ:

6. Փաթեթվածքը՝ մեխանիկական ցուցանիշներով եւ քիմիական կայունությամբ (եթե դրանք նախատեսված են փաթեթվածքի կառուցվածքով եւ նշանակությամբ) պետք է համապատասխանի սույն հոդվածի 6.1-6.8 կետերում շարադրված անվտանգության պահանջներին.

6.1. փաթեթվածք մետաղական.

- պետք է ապահովի հերմետիկությունը՝ օդի ներքին ավելցուկային ճնշման դեպքում,

- պետք է դիմանա սեղմող ճիգին՝ փաթեթվածքի իրանի ուղղահայաց առանցքի ուղղությամբ,

- ներքին պատվածքը պետք է լինի կայուն՝ փաթեթավորվող արտադրանքի նկատմամբ եւ (կամ) դիմանա մանրէազերծմանը կամ պաստերացմանը մոդելային միջավայրերում,

- պետք է լինի կոռոզիակայուն:

6.2. փաթեթվածք ապակյա.

- պետք է դիմանա ներքին հիդրոստատիկ ճնշմանը՝ կախված հիմնական պարամետրերից եւ նշանակությունից,

- պետք է դիմանա ջերմաստիճանի տատանումներին՝ առանց վնասվելու,

- պետք է դիմանա սեղմող ճիգին՝ փաթեթվածքի իրանի ուղղահայաց առանցքի ուղղությամբ,

- ապակու ջրակայունությունը պետք է լինի 3/98 դասից ոչ ցածր (սննդամթերքի, այդ թվում՝ մանկական սննդի, պարֆյումերային, կոսմետիկական արտադրանքի դեպքում),

- պետք է լինի թթվակայուն (պահածոյացման բանկաների եւ շշերի, սննդային թթուների եւ մանկական սննդի մթերքի համար),

- չպետք է կրկնակի օգտագործվի ալկոհոլային արտադրանքի եւ մանկական սննդի հետ շփման համար:

### 6.3. փաթեթվածք պոլիմերային.

- պետք է ապահովի հերմետիկություն,

- պետք է դիմանա սահմանված քանակով հարվածներին՝ բարձրությունից ազատ անկման դեպքում՝ առանց վնասվելու (խցանափակված արտադրատեսակների դեպքում՝ բացի պարֆյումերային, կոսմետիկական արտադրանքից),

- պետք է դիմանա սեղմող ճիգին՝ փաթեթվածքի իրանի ուղղահայաց առանցքի ուղղությամբ (բացի տոպրակներից եւ պարկերից),

- չպետք է ձեւախախտվի եւ ճաքի՝ տաք ջրի ազդեցության տակ (բացի տոպրակներից եւ պարկերից),

- փաթեթվածքի բռնակները պետք է լինեն դրան ամուր կցված եւ դիմանան սահմանված բեռնվածքին,

- փաթեթվածքի եռակցման եւ սոսնձման կարերը չպետք է ջրի հոսք թույլ տան,

- պետք է դիմանա սահմանված ստատիկ բեռնվածքին՝ ձգվելու ժամանակ (տոպրակների եւ պարկերի համար),

- ներքին մակերեսույթը պետք է լինի կայուն՝ փաթեթավորվող արտադրանքի ազդեցության նկատմամբ:

### 6.4. փաթեթվածք՝ սովարաթղթե եւ թղթե.

- պետք է դիմանա սահմանված թվով հարվածներին՝ բարձրությունից ազատ անկման դեպքում՝ առանց վնասվելու,

- պետք է դիմանա սեղմող ճիգին՝ փաթեթվածքի իրանի ուղղահայաց առանցքի ուղղությամբ:

6.5. փաթեթվածք՝ համակցված նյութերից.

- պետք է լինի հերմետիկ (խցանափակման միջոցների առկայության դեպքում) կամ ապահովի միացման կարերի սահմանված ամրությունը,

- պետք է լինի խոնավակայուն,

- ներքին պատվածքի մակերեսույթը չպետք է լինի օքսիդացված,

- փաթեթվածքի ներքին մակերեսույթը պետք է փաթեթավորվող արտադրանքի ազդեցության նկատմամբ կայուն լինի,

6.6. փաթեթվածք՝ տեքստիլ նյութերից.

- պետք է դիմանա սահմանված թվով հարվածներին բարձրությունից ազատ անկման դեպքում՝ առանց վնասվելու,

- պետք է դիմանա սահմանված խզման բեռնվածքին:

6.7. փաթեթվածք փայտյա՝

- պետք է դիմանա սահմանված թվով հարվածներին բարձրությունից ազատ անկման դեպքում՝ առանց վնասվելու,

- պետք է դիմանա սահմանված թվով հարվածներին՝ հորիզոնական կամ թեք հարթությունների վրա,

- պետք է դիմանա սեղմող ճիգին՝ փաթեթվածքի իրանի ուղղահայաց առանցքի ուղղությամբ,

- փայտանյութի խոնավությունը պետք է համապատասխանի սահմանվածին:

6.8. փաթեթվածք կերամիկական՝

- պետք է լինի ջրակայուն:

7. Խցանափակման միջոցների անվտանգությունը պետք է ապահովվի ստորել նշվածներին ներկայացվող պահանջների ամբողջությամբ.

կիրառվող նյութերին, որոնք շփվում են սննդամթերքի հետ՝ սանիտարահիգիենիկ ցուցանիշների առումով,

հերմետիկությանը,

քիմիական կայունությանը,

անվտանգ կերպով բացելուն,

Ֆիզիկամեխանիկական ցուցանիշներին:

8. Սննդամթերքի, այդ թվում՝ մանկական սննդի հետ շփվող խցանափակման միջոցները պետք է համապատասխանեն 1-ին հավելվածում նշված սանիտարահիգիենիկ ցուցանիշներին:

Խցանափակման միջոցների սանիտարաքիմիական հետազոտությունների մոդելավորման պայմանները նշված են 2-րդ հավելվածում:

Սննդամթերքի, այդ թվում՝ մանկական սննդի, պարֆյուներային, կոսմետիկական արտադրանքի հետ շփվող խցանափակման միջոցները դրանց հետ շփվող մոդելային միջավայրերի մեջ չպետք է արտազատեն մարդու առողջության համար վնասակար քանակությամբ՝ քիմիական նյութերի միգրացիայի թույլատրելի քանակությունը գերազանցող նյութեր:

9. Խցանափակման միջոցները ֆիզիկամեխանիկական ցուցանիշներով եւ քիմիական կայունությամբ պետք է համապատասխանեն սույն հոդվածի 9.1-9.4 կետերում թվարկված անվտանգության պահանջներին.

9.1. մետաղական խցանափակման միջոցներ.

- պետք է ապահովեն փաթեթվածքի հերմետիկությունը (բացի պարֆյուներային, կոսմետիկական արտադրանքի համար նախատեսված թասակներից, մյուզլեներից, պահանգներից),

- պահածոյացման համար կափարիչները պետք է տաք եղանակով մշակման նկատմամբ լինեն կայուն,

- պտուտակավոր խցանափակման միջոցները բացելիս պտտող մոմենտը պետք է համապատասխանի սահմանված պահանջներին,

- մամլվող եւ տոփանման թասակների սոսնձման կարը պետք է լինի ամուր,

- կրոնեն-խցանները պետք է դիմանան ներքին հիդրոստատիկ ճնշմանը,

- պետք է կոռոզիայի նկատմամբ լինեն կայուն,

- կափարիչի եւ ամրացնող միջադիրի ներքին մակերեսային լաքաներկային պատվածքը պատերացման եւ մանրէազերծման գործընթացում պետք է կայուն լինի մոդելային միջավայրերի ազդեցության նկատմամբ:

9.2. պոլիմերային եւ համակցված խցանափակման միջոցներ.

- պետք է ապահովեն փաթեթվածքի հերմետիկությունը (բացի ջերմակծկումային, տոփանման թասակներից, կափույրներից, չափաբաժնային սարքերից, անջատիչներից, ամրացնող միջադիրներից, փակելու համար կափարիչներից)՝ սահմանված շահագործման պայմաններում,

- պտուտակավոր կափարիչները եւ թասակները բացելիս պտտող մոմենտը պետք է համապատասխանի սահմանված պահանջներին,

- խաղուն (շամպայն) եւ գազացված գինիների խցանափակման համար նախատեսված խցանափակման միջոցները պետք է դիմանան ներքին հիդրոստատիկ ճնշմանը,

- ջերմակծկումային եւ տոփանման թասակների սոսնձման կարը պետք է լինի ամուր,

- խտարար միջադիրները չպետք է շերտատվեն,

- պոլիմերային փոշու քանակը չպետք է լինի սահմանվածից բարձր,

- պահաճոյացման համար կափարիչները պետք է տաք եղանակով մշակման նկատմամբ լինեն կայուն,

- պահաճոյացման համար կափարիչները պետք է թթուների լուծույթների նկատմամբ լինեն կայուն:

### 9.3. կեղեւախցանային խցանափակման միջոցներ.

- պետք է ապահովեն փաթեթվածքի հերմետիկությունը,

- խցանների եւ ամրացնող միջադիրների խոնավությունը պետք է համապատասխանի սահմանված պահանջներին,

- ամրության սահմանը եռակալված (ազլոմերացված) եւ հավաքական խցանների պտտման ժամանակ պետք է համապատասխանի սահմանված պահանջներին,

- եռակալված (ազլոմերացված) եւ հավաքական խցանները ջրում եռացնելիս չպետք է վնասվեն եւ ճաքեն,

- կողմնային մակերեսային մազականությունը պետք է համապատասխանի սահմանված պահանջներին,

- բնական, տղմանստեցված, եռակալված (ազլոմերացված) եւ հավաքական խցանների խցանային փոշու քանակը չպետք է լինի սահմանվածից ավելի:

### 9.4. ստվարաթղթե խցանափակման միջոցներ.

- պետք է մոդելային միջավայրերի ազդեցության նկատմամբ լինեն կայուն,

- չպետք է շերտատվեն:

10. Փորձարկումների արձանագրությունները, որոնցով հաստատվում է փաթեթավորվող արտադրանք արտադրողի կողմից այդ արտադրանքի արտադրման գործընթացում պատրաստվող փաթեթվածքի (խցանափակման միջոցների) տեսակների համապատասխանությունը սույն հոդվածի 1-9-րդ կետերի պահանջներին, ներառվում են ապացուցողական նյութերի փաթեթի մեջ,

որը ձեւավորվում է փաթեթավորված արտադրանքի համապատասխանությունը հաստատելու ժամանակ:

11. Շուկայում փաթեթվածքի (խցանափակման միջոցների) շրջանառության (պահպանման, փոխադրման, ուտիլիզացիայի) գործընթացներին ներկայացվող պահանջները.

11.1. Փաթեթվածքը (խցանափակման միջոցները) պահպանում են՝ փաթեթվածքի (խցանափակման միջոցների) որոշակի տեսակներին առնչվող նորմատիվային եւ (կամ) տեխնիկական փաստաթղթերի պահանջների համաձայն:

11.2. Փաթեթվածքի (խցանափակման միջոցների) փոխադրումն իրականացվում է տրանսպորտի բոլոր տեսակներով բեռների փոխադրման կանոնների համաձայն,

11.3. պաշարների խնայողության եւ շրջակա միջավայրի աղտոտումը բացառելու նպատակով գործածման մեջ եղած փաթեթվածքը (խցանափակման միջոցները) պետք է ուտիլիզացվի Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

11.4. փաթեթվածքի (խցանափակման միջոցների) ուտիլիզացիայի անհնարին լինելու դեպքում դրա մասին սպառողը պետք է իրազեկվի՝ համապատասխան մականշվածք կատարելու միջոցով:

## **Հոդված 6. Փաթեթվածքի (խցանափակման միջոցների) մականշվածքին ներկայացվող պահանջները**

1. Մականշվածքը պետք է ներառի այն նյութի նույնականացման համար անհրաժեշտ տեղեկությունները, որից պատրաստվում է փաթեթվածքը (խցանափակման միջոցները), ինչպես նաեւ՝ դա ուտիլիզացնելու եւ սպառողներին իրազեկելու հնարավորության մասին տեղեկությունները:



2. Մականշվածքը պետք է ներառի այն նյութի թվային նշումը եւ (կամ) տառային նշումը (հապավումը), որից պատրաստվում է փաթեթվածքը (խցանափակման միջոցները)՝ 3-րդ հավելվածի համաձայն, եւ ներառի պիկտոգրամներ ու խորհրդանիշներ՝ 4-րդ հավելվածի համաձայն. 1-ին նկար՝ փաթեթվածք (խցանափակման միջոցներ)՝ սննդամթերքի հետ շփման համար նախատեսված. 2-րդ նկար՝ փաթեթվածք (խցանափակման միջոցներ)՝ պարֆյուներային՝ կոսմետիկ արտադրանքի համար. 3-րդ նկար՝ փաթեթվածք (խցանափակման միջոցներ)՝ սննդամթերքի հետ շփման համար չնախատեսված. 4- նկար ընդհանուր օգտագործված փաթեթվածքի (խցանափակման միջոցների) ուտիլիզացիայի հնարավորություն՝ Մերիուսի ժապավեն:

3. Փաթեթվածքի (խցանափակման միջոցների) մասին տեղեկությունները պետք է ներկայացված լինեն ուղեկցող փաստաթղթերում եւ ներառեն.

փաթեթվածքի (խցանափակման միջոցների) անվանումը,

փաթեթվածքի (խցանափակման միջոցների) նշանակության մասին տեղեկությունները,

պահպանման, փոխադրման պայմանները, ուտիլիզացիայի հնարավորությունը,

մշակման եղանակը (բազմաշրջանառու փաթեթվածքի համար),

պատրաստողի (արտադրողի) անվանումը եւ գտնվելու վայրը, նրա հետ կապ հաստատելու համար տեղեկությունները,

պատրաստողի (արտադրողի) կողմից լիազորված անձի, ներմուծողի անվանումը եւ գտնվելու վայրը, նրանց հետ կապ հաստատելու համար տեղեկությունները (դրանց առկայության դեպքում),

պատրաստման ամսաթիվը (ամիսը, տարին),

պահպանման ժամկետը (եթե սահմանված է պատրաստողի (արտադրողի) կողմից):

4. Տեղեկությունները պետք է շարադրված լինեն ռուսերենով եւ Մաքսային միության անդամ պետության պետական լեզվով (լեզուներով)՝ Մաքսային միության անդամ պետության (պետությունների) օրենսդրության (օրենսդրությունների) մեջ համապատասխան պահանջների առկայության դեպքում:

### **Հոդված 7. Համապատասխանության հավաստումը**

1. Նախքան Մաքսային միության մաքսային տարածքում շրջանառության մեջ դնելը՝ փաթեթվածքը (խցանափակման միջոցները) պետք է անցնի սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջների հետ համապատասխանության հավաստման ընթացակարգը:

2. Փաթեթվածքի (խցանափակման միջոցների) համապատասխանության հավաստումը սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին պարտադիր բնույթ է կրում եւ իրականացվում է համապատասխանությունը հայտարարագրելու միջոցով՝ հետեւյալ սխեմաներից որեւէ մեկի համաձայն.

2.1. սխեմաներ 3h, 4h, 5h՝ այն սննդամթերքի, այդ թվում՝ մանկական սննդի, պարֆյումերային, կոսմետիկական արտադրանքի փաթեթավորման համար նախատեսված փաթեթվածքի (խցանափակման միջոցների) առնչությամբ, որն անմիջական շփում ունի փաթեթավորված արտադրանքի հետ, երեխայի բերանի հետ անմիջապես շփվող խաղալիքների եւ մանկական տեսականու արտադրատեսակների առնչությամբ (այն փաթեթվածքի (խցանափակման միջոցների) դեպքում, որը տարբեր նյութերից է, ունի կիրառվող նյութերի տարբեր տիպաչափեր, հաստություն, փորձարկումները կարող են անցկացվել տիպային նմուշների վրա, որոնք ներառում են փաթեթվածքի (խցանափակման միջոցների) տեսակի առանձնահատկությունները),

2.2. սխեմաներ 1h ու 2h՝ սույն կետի 2.1 ենթակետում չնշված փաթեթվածքի (խցանափակման միջոցների) առնչությամբ (այն փաթեթվածքի (խցանափակման

միջոցների) դեպքում, որը տարբեր նյութերից է, ունի օգտագործվող նյութերի տարբեր տիպաչափսեր, հաստություն, փորձարկումները կարող են անցկացվել տիպային նմուշների վրա, որոնք ներառում են փաթեթվածքի (խցանափակման միջոցների) տեսակի առանձնահատկությունները):

3. Սերիական թողարկման փաթեթվածքի (խցանափակման միջոցների) համապատասխանության հայտարարագրումն իրականացնում է պատրաստողը կամ պատրաստողի կողմից լիազորված անձը:

Փաթեթվածքի (խցանափակման միջոցների) խմբաքանակի համապատասխանության հայտարարագրումն իրականացնում է պատրաստողը (պատրաստողի կողմից լիազորված անձը), ներմուծողը:

4. Փաթեթվածքի (խցանափակման միջոցների) նույնականացումը՝ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջների հետ դրա համապատասխանությունը հայտարարագրելու ժամանակ, կատարում է արտադրողը (արտադրողի կողմից լիազորված անձը), ներմուծողը:

5. Համապատասխանության մասին հայտարարագրի ընդունումը ներառում է հետևյալ ընթացակարգերը.

- նորմատիվային եւ տեխնիկական փաստաթղթերի ձեւակերպում եւ վերլուծություն,
- փորձարկումների իրականացում,
- ապացուցողական նյութերի լրակազմի ձեւավորում,
- համապատասխանության մասին հայտարարագրի ընդունում ու գրանցում,
- Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանի կատարում:

6. Համապատասխանությունը հայտարարագրելիս պատրաստողը (արտադրողի կողմից լիազորված անձը), ներմուծողը ինքնուրույն ձեւավորում է ապացուցողական նյութերը՝ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին

փաթեթվածքի (խցանափակման միջոցների) համապատասխանությունը հավաստելու նպատակով:

7. Համապատասխանության մասին հայտարարագիրն ընդունելու համար նախատեսված ապացուցողական նյութերը ներառում են ստորեւ նշվածները.

- այն փորձարկումների արձանագրությունը (արձանագրությունները)՝ պատրաստողի (պատրաստողի կողմից լիազորված անձի), ներմուծողի եւ (կամ) հավաստագրված փորձարկման լաբորատորիայի (կենտրոնի) կողմից իրականացված, որը ներառված է Մաքսային միության հավաստագրման մարմինների եւ փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) Միասնական ռեգիստրում, որով հաստատվում է հայտարարագրվող պահանջներին համապատասխանությունը (պայմանով, որ արձանագրությունը (արձանագրությունները) կազմելու պահից անցել է մեկ տարուց ոչ ավելի):

- այն ստանդարտների ցանկը, որոնց պահանջներին պետք է համապատասխանի փաթեթվածքը (խցանափակման միջոցները)՝ 4-րդ հոդվածի 2-րդ կետում նշված ստանդարտների ցանկից,

- ընդունված այն տեխնիկական որոշումների նկարագիրը, որոնցով հաստատվում է սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջների կատարումը, եթե 4-րդ հոդվածի 2-րդ կետում նշված ստանդարտները բացակայում են կամ չեն կիրառվել,

- այլ փաստաթղթեր, որոնցով հաստատվում է փաթեթվածքի (խցանափակման միջոցների) համապատասխանությունը սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին, այդ թվում՝ կառավարման համակարգին առնչվող համապատասխանության հավաստագիրը կամ կառավարման համակարգի գնահատմանն առնչվող ակտը (արձանագրությունը) (առկայության դեպքում), փաթեթվածքի (խցանափակման միջոցների) որոշակի տեսակին առնչվող համապատասխանության հավաստագիրը (հավաստագրերը) առկայության դեպքում), նյութերին առնչվող համապատասխանության հավաստագիրը

(հավաստագրերը) կամ փորձարկումների արձանագրությունները (առկայության դեպքում):

8. Համապատասխանության մասին հայտարարագիրը ձեւակերպվում է Մաքսային միության հանձնաժողովի որոշմամբ հաստատված միասնական ձեւով:

Համապատասխանության մասին հայտարարագիրը ենթակա է գրանցման՝ Մաքսային միության օրենսդրության համաձայն:

9. Համապատասխանության մասին հայտարարագիրը ձեւակերպվում է փաթեթվածքի (խցանափակման միջոցների) որոշակի անվանման կամ փաթեթվածքի (խցանափակման միջոցների) խմբի համար, որոնք պատրաստված են միեւնույն նյութերից եւ ունեն նույն կառուցվածքը եւ համապատասխանում են անվտանգության միեւնույն պահանջներին:

10. Սույն հոդվածի 7-րդ կետով նախատեսված ապացուցողական նյութերի լրակազմը՝ համապատասխանության մասին հայտարարագրի հետ միասին, պետք է պահվի պատրաստողի (պատրաստողի կողմից լիազորված անձի), ներմուծողի մոտ՝ Մաքսային միության օրենսդրությամբ սահմանված ժամկետի ընթացքում:

11. Փաթեթվածքի (խցանափակման միջոցների) համապատասխանության մասին հայտարարագիրն ընդունվում է 5 տարուց ոչ ավելի ժամկետով՝ սերիական թողարկման արտադրանքի համար: Փաթեթվածքի (խցանափակման միջոցների) խմբաքանակի համար համապատասխանության մասին հայտարարագիրն ընդունվում է՝ առանց դրա գործողության ժամկետը նշելու:

Փաթեթվածքի (խցանափակման միջոցների) խմբաքանակի համապատասխանության մասին հայտարարագիրը գործում է միայն կոնկրետ խմբաքանակին պատկանող փաթեթվածքի (խցանափակման միջոցների) առնչությամբ:

## **Հոդված 8. Արտադրանքի մականշումը՝ Մաքսային միության անդամ պետությունների շուկայում շրջանառության միասնական նշանով**

1. Սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանող եւ սույն Տեխնիկական կանոնակարգի 7-րդ հոդվածի համաձայն համապատասխանության հավաստման ընթացակարգն անցած փաթեթվածքը (խցանափակման միջոցները) պետք է ունենա մականշվածք՝ Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով, որը դրվում է ուղեկցող փաստաթղթերում:

2. Արտադրանքի մականշումը Մաքսային միության անդամ պետությունների շուկայում շրջանառության միասնական նշանով իրականացվում է պատրաստողի, պատրաստողի կողմից լիազորված անձի, ներմուծողի կողմից՝ նախքան արտադրանքը շուկայահանելը:

3. Փաթեթվածքը (խցանափակման միջոցները) Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով մականշվում է դրա՝ սույն Տեխնիկական կանոնակարգի, ինչպես նաեւ՝ Մաքսային միության տեխնիկական մյուս այն կանոնակարգերին համապատասխանելու դեպքում, որոնց գործողությունը տարածվում է դրա վրա:

## **Հոդված 9. Երաշխիքային վերապահումը**

1. Մաքսային միության անդամ պետությունները պարտավոր են ձեռնարկել բոլոր միջոցները՝ փաթեթվածքի (խցանափակման միջոցների) Մաքսային միության մաքսային տարածքում շրջանառության մեջ բացթողնումը սահմանափակելու, արգելք սահմանելու համար, ինչպես նաեւ՝ շուկայից հետ վերցնելու այն փաթեթվածքը (խցանափակման միջոցները), որը չի համապատասխանում սույն Տեխնիկական կանոնակարգի եւ Մաքսային միության տեխնիկական մյուս այն կանոնակարգերի պահանջներին, որոնց գործողությունը տարածվում է փաթեթվածքի (խցանափակման միջոցների) վրա:

**Հավելված 1**

Մաքսային միության «Փաթեթվածքի  
անվտանգության մասին»  
տեխնիկական կանոնակարգի

**Փաթեթվածքից (խցանափակման միջոցներից) արտազատվող,  
սննդամթերքի հետ շփվող նյութերի անվտանգության սահմանադրական հիմնական  
ցուցանիշներ եւ նորմատիվներ**

**Աղյուսակ 1**

| Արտադրատեսակում<br>օգտագործված նյութի<br>անվանումը   | Վերահսկելի<br>ցուցիչներ | ՄԹՔ,<br>մգ/լ | ՍԹԽ,<br>խմելու<br>ջրում,<br>մգ/լ | Վտանգա-<br>վորության<br>դաս<br>***** | ՍԹԽ մ.օ.,<br>մգ/մ3<br>մթնոլոր-<br>տային<br>օդում | Վտանգա-<br>վորության<br>դաս<br>***** |  |
|--|-------------------------|--------------|----------------------------------|--------------------------------------|--|--------------------------------------|--|
|  | 2                       | 3            | 4                                | 5                                    | 6  | 7                                    |  |
| <b>1. Պոլիմերային նյութեր եւ դրանց հիմքով պլաստիկ զանգվածներ</b>   |                         |              |                                  |                                      |  |                                      |  |
| 1.1. Պոլիէթիլեն (ԲՃՊԷ,<br>ՑՃՊԷ), պոլիպրոպիլեն,<br>էթիլենով պրոպիլենի<br>համապոլիմերներ,<br>պոլիբուտիլեն,<br>պոլիիզոբուտիլեն,<br>պոլիօլեֆինների հիմքով<br>համակցված նյութեր | Ֆորմալդեհիդ             | 0.100        | --                               | 2                                    | 0.003  | 2                                    |  |
|  | Ացետալդեհիդ             | --           | 0.200                            | 4                                    | 0.010  | 3                                    |  |
|  | Էթիլացետատ              | 0.100        | --                               | 2                                    | 0.100  | 4                                    |  |
|  | Հեքսան                  | 0.100        | --                               | 4                                    | --   | --                                   |  |
|  | Հեպտան                  | 0.100        | --                               | 4                                    |  |                                      |  |
|  | Հեքսեն                  | --           | --                               | --                                   | 0.085  | 3                                    |  |
|  | Հեպտեն                  | --           | --                               | --                                   | 0.065  | 3                                    |  |
|  | Ացետոն                  | 0.100        | --                               | 3                                    | 0.350  | 4                                    |  |
|  | <i>Սպիրտներ՝</i>        |              |                                  |                                      |  |                                      |  |
|  | մեթիլային               | 0.200        | --                               | 2                                    | 0.500  | 3                                    |  |

|   |                                 |       |       |   |       |   |
|---|---------------------------------|-------|-------|---|-------|---|
|   | պրոպիլ                          | 0.100 | --    | 4 | 0.300 | 3 |
|   | իզոպրոպիլ                       | 0.100 | --    | 4 | 0.600 | 3 |
|   | բուտիլ                          | 0.500 | --    | 2 | 0.100 | 3 |
|   | իզոբուտիլ                       | 0.500 | --    | 2 | 0.100 | 4 |
| 1.2. Պոլիստիրոլային պլաստիկներ                                      |                                 |       |       |   |       |   |
| 1.2.1. Բլոկային պոլիստիրոլ, հարվածակայուն                           | Ստիրոլ                          | 0.010 | --    | 2 | 0.002 | 2 |
|   | <i>Սպիրտներ՝</i>                |       |       |   |       |   |
|   | մեթիլ                           | 0.200 | --    | 2 | 0.500 | 3 |
|   | բուտիլ                          | 0.500 | --    | 2 | 0,100 | 3 |
|   | Ֆորմալդեհիդ                     | 0,100 | --    | 2 | 0.003 | 2 |
|   | Բենզոլ                          | --    | 0.010 | 2 | 0.100 | 2 |
|   | Տոլուոլ                         | --    | 0.500 | 4 | 0.600 | 3 |
|   | Էթիլբենզոլ                      | --    | 0.010 | 4 | 0.020 | 3 |
| 1.2.2. Ստիրոլի սպոլիմեր՝ ակրիլոնիտրիլով                             | Ստիրոլ                          | 0.010 | --    | 2 | 0.002 | 2 |
|   | Ակրիլոնիտրիլ                    | 0.020 | --    | 2 | 0.030 | 2 |
|   | Ֆորմալդեհիդ                     | 0.100 | --    | 2 | 0.003 | 2 |
|   | Բենզալդեհիդ                     | --    | 0.003 | 4 | 0.040 | 3 |
| 1.2.3. АБС-պլաստիկներ (ակրիլնիտրիլ բուտադիեն ստիրոլային պլաստիկներ) | Ստիրոլ                          | 0.010 | --    | 2 | 0.002 | 2 |
|   | Ակրիլոնիտրիլ                    | 0.020 | --    | 2 | 0.030 | 2 |
|   | Ալֆա-մեթիլստիրոլ                | --    | 0.100 | 3 | 0.040 | 3 |
|   | Բենզոլ                          | --    | 0.010 | 2 | 0.100 | 2 |
|   | Տոլուոլ                         | --    | 0.500 | 4 | 0.600 | 3 |
|   | Էթիլբենզոլ                      | --    | 0.010 | 4 | 0.020 | 3 |
|   | Բենզալդեհիդ                     | --    | 0.003 | 4 | 0.040 | 3 |
|   | Քսիլոլներ (իզոմերների խառնուրդ) | 0.010 | --    | 2 | 0.002 | 2 |
| 1.2.4. Ստիրոլի համապոլիմեր՝ մեթիլմեթակրիլատով                       | Ստիրոլ                          | 0.010 | --    | 2 | 0.002 | 2 |
|   | Մեթիլմեթակրիլատ                 | 0.250 | --    | 2 | 0.010 | 3 |
|   | Մեթիլ սպիրտ                     | 0.200 | --    | 2 | 0.500 | 3 |
|   | Ֆորմալդեհիդ                     | 0,100 | --    | 2 | 0.003 | 2 |



|   |                                 |        |       |    |       |       |
|---|---------------------------------|--------|-------|----|-------|-------|
| 1.2.5. Ստիրոլի համապոլիմեր՝ մեթիլմեթակրիլատով եւ ակրիլանիտրիլով | Ստիրոլ                          | 0.010  | --    | 2  | 0.002 | 2     |
|   | Մեթիլմեթակրիլատ                 | 0.250  | --    | 2  | 0.010 | 3     |
|   | Ակրիլոնիտրիլ                    | 0.020  | --    | 2  | 0.030 | 2     |
|   | Մեթիլ սպիրտ                     | 0.200  | --    | 2  | 0.500 | 3     |
|   | Ֆորմալդեհիդ                     | 0,100  | --    | 2  | 0.003 | 2     |
| 1.2.6. Ստիրոլի համապոլիմեր՝ ալֆա-մեթիլստիրոլով                  | Ստիրոլ                          | 0.010  | --    | 2  | 0.002 | 2     |
|   | Ալֆա-մեթիլստիրոլ                | --     | 0.100 | 3  | 0.040 | 3     |
|   | Բենզալդեհիդ                     | --     | 0.003 | 4  | 0.040 | 3     |
|   | Ացետոֆենոն                      | --     | 0.100 | 3  | 0.003 | 3     |
| 1.2.7. Ստիրոլի համապոլիմեր՝ բութադիենով                         | Ստիրոլ                          | 0.010  | --    | 2  | 0.002 | 2     |
|   | Բութադիեն                       | --     | 0.050 | 4  | 1.000 | 4     |
|   | Ացետալդեհիդ                     | --     | 0.200 | 4  | 0.010 | 3     |
|   | Ացետոն                          | 0.100  | --    | 3  | 0.350 | 4     |
|   | <i>Սպիրտներ՝</i>                |        |       |    |       |       |
|   | մեթիլ                           | 0.200  | --    | 2  | 0.500 | 3     |
|   | բուտիլ                          | 0.500  | --    | 2  | 0.100 | 3     |
|   | Քսիլոլներ (իզոմերների խառնուրդ) | --     | 0.050 | 3  | 0.200 | 3     |
|   | 1.2.8. Փրփրապոլիստիրոլներ       | Ստիրոլ | 0.010 | -- | 2     | 0.002 |
| Բենզոլ  |                                 | --     | 0.010 | 2  | 0,100 | 2     |
| Տոլուոլ   |                                 | --     | 0.500 | 4  | 0.600 | 3     |
| Էթիլբենզոլ  |                                 | --     | 0.010 | 4  | 0.020 | 3     |
| Կումոլ (Իզոպրոպիլ բենզոլ)                                       |                                 | --     | 0.100 | 3  | 0.014 | 4     |
| Մեթիլ սպիրտ   |                                 | 0.200  | --    | 2  | 0.500 | 3     |
| Ֆորմալդեհիդ   |                                 | 0,100  | --    | 2  | 0.003 | 2     |
| 1.3. Պոլիվինիլբլորիդային պլաստիկներ                             | Ացետալդեհիդ                     | --     | 0.200 | 4  | 0.010 | 3     |
|   | Ացետոն                          | 0.100  | --    | 3  | 0.350 | 4     |
|   | Վինիլ քլորային                  | 0.01   | --    | 2  | 0.01  | 1     |
|   | <i>Սպիրտներ՝</i>                |        |       |    |       |       |

|  |                  |                 |       |   |        |    |
|--|------------------|-----------------|-------|---|--------|----|
|  | մեթիլային        | 0.200           | --    | 2 | 0.500  | 3  |
|  | պրոպիլային       | 0.100           | --    | 4 | 0.300  | 3  |
|  | իզոպրոպիլային    | 0.100           | --    | 4 | 0.600  | 3  |
|  | բուտիլային       | 0.500           | --    | 2 | 0.100  | 3  |
|  | իզոբուտիլային    | 0.500           | --    | 2 | 0.100  | 4  |
|  | Բենզոլ           | --              | 0.010 | 2 | 0.100  | 2  |
|  | Տոլուոլ          | --              | 0.500 | 4 | 0.600  | 3  |
|  | Ցինկ (Zn)        | 1.000           | --    | 3 | --     | -- |
|  | Անագ (Sn)        | --              | 2.000 | 3 | --     | -- |
|  | Երկօկտիլֆտալատ   | 2.000           | --    | 3 | 0.020  | -- |
|  | Երկբուտիլֆտալատ  | Չի թույլատրվում |       |   |        |    |
| 1.4. Վինիլացետատի հիմքով պոլիմերներ եւ դրա ածանցյալները պոլիվինիլացետատ, պոլիվինիլային սպիրտ, դիբուտիլմալեինատի հետ վինիլացետատի սպիրտային դիսպերսիա | Վինիլացետատ      | --              | 0.200 | 2 | 0.150  | 3  |
|  | Ֆորմալդեհիդ      | 0,100           | --    | 2 | 0.003  | 2  |
|  | Ացետալդեհիդ      | --              | 0.200 | 4 | 0.010  | 3  |
|  | Հեքսան           | 0.100           | --    | 4 | --     | -- |
|  | Հեպտան           | 0.100           | --    | 4 | --     | -- |
| 1.5. Պոլիակրիլատներ  | Հեքսան           | 0.100           | --    | 4 | --     | -- |
|  | Հեպտան           | 0.100           | --    | 4 | --     | -- |
|  | Ակրիլոնիտրիլ     | 0.020           | --    | 2 | 0.030  | 2  |
|  | Մեթիլակրիլատ     | --              | 0.020 | 4 | 0.010  | 4  |
|  | Մեթիլմեթակրիլատ  | 0.250           | --    | 2 | 0.010  | 3  |
|  | Բուտիլակրիլատ    | --              | 0.010 | 4 | 0.0075 | 2  |
| 1.6. Պոլիօրգանասիլակսաններ (սիլիկոններ)  | Ֆորմալդեհիդ      | 0,100           | --    | 2 | 0.003  | 2  |
|  | Ացետալդեհիդ      | --              | 0.200 | 4 | 0.010  | 3  |
|  | Ֆենոլ            | 0.050           | --    | 4 | 0.003  | 2  |
|  | <i>Սպիրտներ՝</i> |                 |       |   |        |    |
|  | մեթիլ            | 0.200           | --    | 2 | 0.500  | 3  |
|  | բուտիլ           | 0.500           | --    | 2 | 0.100  | 3  |
|  | Բենզոլ           | --              | 0.010 | 2 | 0.100  | 2  |

|  |                       |       |       |   |        |    |  |
|--|-----------------------|-------|-------|---|--------|----|--|
| 1.7. Պոլիամիդներ   |                       |       |       |   |        |    |  |
| 1.7.1. Պոլիամիդ 6<br>(պոլիկապրոամիդ,<br>կապրոն)              | Է-կապրոլակտամ         | 0.500 | --    | 4 | 0.060  | 3  |  |
|  | Բենզոլ                | --    | 0.010 | 2 | 0.100  | 2  |  |
|  | Ֆենոլ                 | 0.050 | --    | 4 | 0.003  | 2  |  |
| 1.2.7. Պոլիամիդ 66<br>(պոլիհեքսամեթիլենադիպ<br>ամիդ, նեյլոն) | Հեքսամեթիլ-<br>դիամին | 0.010 | --    | 2 | 0.001  | 2  |  |
|  | Մեթիլ սպիրտ           | 0.200 | --    | 2 | 0.500  | 3  |  |
|  | Բենզոլ                | --    | 0.010 | 2 | 0.100  | 2  |  |
| 1.7.3. Պոլիամիդ 610<br>(պոլիհեքսամեթիլենսեբաց<br>իչամիդ)     | Հեքսամեթիլ-<br>դիամին | 0.010 | --    | 2 | 0.001  | 2  |  |
|  | Մեթիլ սպիրտ           | 0.200 | --    | 2 | 0.500  | 3  |  |
|  | Բենզոլ                | --    | 0.010 | 2 | 0.100  | 2  |  |
| 1.8. Պոլիուրետաններ  | Էթիլենգլիկոլ          | --    | 1.000 | 3 | 1.000  | -- |  |
|  | Ացետալդեհիդ           | --    | 0.200 | 4 | 0.010  | 3  |  |
|  | Ֆորմալդեհիդ           | 0.100 | --    | 2 | 0.003  | 2  |  |
|  | Էթիլացետատ            | 0.100 | --    | 2 | 0.100  | 4  |  |
|  | Բուֆիլացետատ          | --    | 0.100 | 4 | 0.100  | 4  |  |
|  | Ացետոն                | 0.100 | --    | 3 | 0.350  | 4  |  |
|  | <i>Սպիրտներ՝</i>      |       |       |   |        |    |  |
|  | մեթիլ                 | 0.200 | --    | 2 | 0.500  | 3  |  |
|  | պրոպիլ                | 0.100 | --    | 4 | 0.300  | 3  |  |
|  | իզոպրոպիլ             | 0.100 | --    | 4 | 0.600  | 3  |  |
|  | Բենզոլ                | --    | 0.010 | 2 | 0.100  | 2  |  |
|  | Տոլուոլ               | --    | 0.500 | 4 | 0.600  | 3  |  |
|  | 1.9. Պոլիէթերներ՝     |       |       |   |        |    |  |
| 1.9.1. Պոլիէթիլեն-օքսիդ                                      | Ֆորմալդեհիդ           | 0.100 | --    | 2 | 0,003* | 2  |  |
|  | Ացետալդեհիդ           | --    | 0.200 | 4 | 0.010  | 3  |  |
| 1.2.9. Պոլիպրոպիլեն-<br>օքսիդ                                | Մեթիլացետատ           | --    | 0.100 | 3 | 0.070  | 4  |  |
|  | Ացետոն                | 0.100 | --    | 3 | 0.350  | 4  |  |
|  | Ֆորմալդեհիդ           | 0,100 | --    | 2 | 0.003  | 2  |  |
|  | Ացետալդեհիդ           | --    | 0.200 | 4 | 0.010  | 3  |  |

|   |                     |       |       |    |       |       |   |
|---|---------------------|-------|-------|----|-------|-------|---|
| 1.9.3. Պոլիտետրամեթիլենօքսիդ                                      | Պրոպիլային սպիրտ    | 0.100 | --    | 4  | 0.300 | 3     |   |
|   | Ացետալդեհիդ         | --    | 0.200 | 4  | 0.010 | 3     |   |
|   | Ֆորմալդեհիդ         | 0.100 | --    | 2  | 0.003 | 2     |   |
| 1.9.4. Պոլիֆենիլեն-օքսիդ  | Ֆենոլ               | 0.050 | --    | 4  | 0.003 | 2     |   |
|   | Ֆորմալդեհիդ         | 0.100 | --    | 2  | 0.003 | 2     |   |
|   | Մեթիլ սպիրտ         | 0.200 | --    | 2  | 0.500 | 3     |   |
| 1.9.5. Պոլիէթիլենտերեֆտալատ և տերեֆտալատի թթվի հիմքով սպոլիմերներ | Ացետալդեհիդ         | --    | 0.200 | 4  | 0,010 | 3     |   |
|   | Էթիլենգլիկոլ        | --    | 1.000 | 3  | 1.000 | --    |   |
|   | Դիմեթիլտերեֆտալատ   | --    | 1.500 | 4  | 0.010 | --    |   |
|   | Ֆորմալդեհիդ         | 0.100 | --    | 2  | 0.003 | 2     |   |
|   | <i>Սպիրտներ՝</i>    |       |       |    |       |       |   |
|   | մեթիլ               | 0.200 | --    | 2  | 0.500 |       |   |
|   | բուտիլ              | 0.500 | --    | 2  | 0.100 | 3     |   |
|   | իզոբուտիլ           | 0.500 | --    | 2  | 0.100 | 4     |   |
|   | Ացետոն              | 0.100 | --    | 3  | 0.350 | 4     |   |
|   | 1.9.6. Պոլիկարբոնատ | Ֆենոլ | 0.050 | -- | 4     | 0.003 | 2 |
| Մեթիլենքլորիդ   |                     | --    | 7.500 | 3  | --    | --    |   |
| Քլորբենզոլ  |                     | --    | 0.020 | 3  | 0.100 | 3     |   |
| 1.9.7. Պոլիսուլֆոն  | Բենզոլ              | --    | 0.010 | 2  | 0.100 | 2     |   |
|   | Ֆենոլ               | 0.050 | --    | 4  | 0.003 | 2     |   |
| 1.9.8. Պոլիֆենիլենսուլֆիդ   | Ֆենոլ               | 0.050 | --    | 4  | 0.003 | 2     |   |
|   | Ացետալդեհիդ         | --    | 0.200 | 4  | 0.010 | 3     |   |
|   | Մեթիլ սպիրտ         | 0.200 | --    | 2  | 0.500 | 3     |   |
|   | Դիքլորբենզոլ        | --    | 0.002 | 3  | 0.030 | --    |   |
|   | Բոռ (B)             | 0.500 | --    | 2  | --    | --    |   |
| 1.9.9. Որպես կապակցանյութ օգտագործելու դեպքում՝                   |                     |       |       |    |       |       |   |
| Ֆենոլ-ֆորմալդեհիդային խեժերի                                      | Ֆենոլ               | 0.050 | --    | 4  | 0.003 | 2     |   |
|   | Ֆորմալդեհիդ         | 0.100 | --    | 2  | 0.003 | 2     |   |
| Սիլիցիումօրգանական  | Ֆորմալդեհիդ         | 0,100 | --    | 2  | 0.003 | 2     |   |

|  |                  |       |       |   |        |    |
|--|------------------|-------|-------|---|--------|----|
| խեժերի   | Ացետալդեհիդ      | --    | 0.200 | 4 | 0.010  | 3  |
|  | Ֆենոլ            | 0.050 | --    | 4 | 0.003  | 2  |
|  | <i>Սպիրտներ՝</i> |       |       |   |        |    |
|  | մեթիլ            | 0.200 | --    | 2 | 0.500  | 3  |
|  | բուտիլ           | 0.500 | --    | 2 | 0.100  | 3  |
|  | Բենզոլ           | --    | 0.010 | 2 | 0.100  | 2  |
| Էպօքսիդային խեժերի   | Էպիքլորհիդրին    | 0.100 | --    | 2 | 0.200  | 2  |
|  | Ֆենոլ            | 0.050 | --    | 4 | 0.003  | 2  |
|  | Ֆորմալդեհիդ      | 0,100 | --    | 2 | 0.003  | 2  |
| 1.10. Ֆտորոպլաստներ՝<br>Ֆտորոպլաստ-3,<br>Ֆտորոպլաստ-4, տեֆլոն                  | Ֆտոր-ին          | 0.500 | --    | 2 | --     | -- |
|  | Ֆորմալդեհիդ      | 0.100 | --    | 2 | 0.003  | 2  |
|  | Հեքսան           | 0.100 | --    | 4 | --     | -- |
|  | Հեպտան           | 0.100 | --    | 4 | --     | -- |
| 1.11. Ֆենոլֆորմալդեհիդային<br>խեժերի հիմքով<br>պլաստմասսաներ<br>(ֆենոպլաստներ) | Ֆորմալդեհիդ      | 0,100 | --    | 2 | 0.003  | 2  |
|  | Ացետալդեհիդ      | --    | 0.200 | 4 | 0.010  | 3  |
|  | Ֆենոլ            | 0.050 | --    | 4 | 0.003  | 2  |
| 1.12. Պոլիֆորմալդեհիդ  | Ֆորմալդեհիդ      | 0,100 | --    | 2 | 0.003  | 2  |
|  | Ացետալդեհիդ      | --    | 0.200 | 4 | 0.010  | 3  |
| 1.13. Ամինոպլաստներ<br>(կարբամիդ- եւ մելամին-<br>ֆորմալդեհիդային)              | Ֆորմալդեհիդ      | 0,100 | --    | 2 | 0.003  | 2  |
| 1.14. Պոլիմերային նյութեր<br>Էպօքսիդային խեժերի<br>հիմքով                      | Էպիքլորհիդրին    | 0.100 | --    | 2 | 0.200  | 2  |
|  | Ֆենոլ            | 0.050 | --    | 4 | 0.003  | 2  |
|  | Ֆորմալդեհիդ      | 0.100 | --    | 2 | 0,003* | -- |
| 1.15. Իոնոմերային խեժեր,<br>այդ թվում՝ սերլին                                  | Ֆորմալդեհիդ      | 0,100 | --    | 2 | 0.003  | 2  |
|  | Ացետալդեհիդ      | --    | 0.200 | 4 | 0.010  | 2  |
|  | Ֆորմալդեհիդ      | 0.100 | --    | 2 | 0,003* | 3  |
|  | Մեթիլ սպիրտ      | 0.200 | --    | 2 | 0.500  | 2  |
|  | Ցինկ (Zn)        | 1.000 | --    | 3 | --     | 3  |
| 1.16. Ցելյուլոզա   | Էթիլացետատ       | 0.100 | --    | 2 | 0.100  | -- |

|  |   |                             |       |    |       |       |   |
|--|---|-----------------------------|-------|----|-------|-------|---|
|  | Ֆորմալդեհիդ   | 0.100                       | --    | 2  | 0.003 | 4     |   |
|  | Բենզոլ  | --                          | 0.010 | 2  | 0,100 | 2     |   |
|  | Ացետոն  | 0.100                       | --    | 3  | 0.350 | 2     |   |
| 1.17. Եթերացեյուղային պլաստմասսաներ (էտրոլներ) | Էթիլացետատ  | 0.100                       | --    | 2  | 0.100 | 4     |   |
|  | Ացետալդեհիդ   | --                          | 0.200 | 4  | 0.010 | 4     |   |
|  | Ֆորմալդեհիդ   | 0,100                       | --    | 2  | 0.003 | 3     |   |
